ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2023թ. **N------Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 694-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2023 թվականի ծրագրի վերաբերյալ» N 694-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները.

1) Հավելվածի 34-րդ կետը լրացնել նոր 6-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«6) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալներին, եթե վարձակալած գույքը գտնվում է համայնքային սեփականություն հանդիսացող և այլ անձին օգտագործման իրավունքով չտրամադրված գույքին անմիջապես կից, որի մուտքը կազմակերպված է բացառապես վարձակալի տարածքից:»:

2) Հավելվածի 6-րդ գլուխը լրացնել՝ նոր 28-ից 42-րդ կետերով՝ համաձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հավելված
Երևանի քաղաքի ավագանու
«_____» _____2023թ.
N _____-Ն որոշման

28	Աջափնյակ	01-001-0205-0177	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական օբյեկտների	Ֆուչիկի փողոցի հ.27/14 հասցեին կից	
29	Կենտրոն	01-006-519-035	Անցումային բուֆերային գոտի		Արամի փողոցի հ.21/1	
30	Կենտրոն	01-006-529-023	Անցումային բուֆերային գոտի		Գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փ.Բուզանդ, Ե.Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածք	
31	Կենտրոն	01-006-529-027	Անցումային բուֆերային գոտի		Գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փ.Բուզանդ, Ե.Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածք	
32	Կենտրոն	01-006-208-020	բնակավայրերի	խառը կառուցապատում	33-րդ թաղամաս	
33	Կենտրոն	01-006-208-035	բնակավայրերի	խառը կառուցապատում	33-րդ թաղամաս	
34	Կենտրոն	01-006-208-036	բնակավայրերի	խառը կառուցապատում	33-րդ թաղամաս	
35	Կենտրոն	01-006-208-044	բնակավայրերի	խառը կառուցապատում	33-րդ թաղամաս	

36	Կենտրոն	01-006-208-052	բնակավայրերի	խառը կառուցապատում	33-րդ թաղամաս	
37	Կենտրոն	01-006-208-054	բնակավայրերի	խառը կառուցապատում	33-րդ թաղամաս	
38	Կենտրոն	01-006-208-103	բնակավայրերի	խառը կառուցապատում	33-րդ թաղամաս	
39	Կենտրոն	01-006-208-133	բնակավայրերի	խառը կառուցապատում	33 թաղամաս	
40	Կենտրոն	01-006-208-017	բնակավայրերի	խառը կառուցապատում	33 թաղամաս	
41	Կենտրոն	01-006-208-018	բնակավայրերի	խառը կառուցապատում	33 թաղամաս	
42	Մալաթիա-Սեբաստիա	01-007-0122-0006	բնակավայրերի	խառը կառուցապատում	Հաղթանակ 1-ին թաղ հ.1/601 հասցեին կից	

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 694-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. **Խնդրի սահմանումը**

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է ընդունում Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ, որում նշված են օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը, ընդ որում՝ հողամասերի օտարման տարեկան ծրագրի մեջ պետք է նշվեն նաև հողամասերի գտնվելու վայրը, ծածկագրերը, Երևանի գլխավոր հատակագծով սահմանված նպատակները և օտարման եղանակները:

2. **Առկա իրավիճակը**

Երևան քաղաքում առկա են գույքեր, որոնց նկատմամբ սահմանված կարգով գրանցված են Երևան համայնքի սեփականության իրավունքը, սակայն համայնքը փաստացի զրկված է այն օգտագործելու և տնօրինելու իրավունքից, քանի որ քննարկվող գույքերի մուտքերն ու ելքերը կազմակերպված են բացառապես այլ անձի /վարձակալի/ վարձակալության իրավունքով տրամադրված տարածքից, որը հնարավորություն չի ընձեռում այն սահմանված կարգով ներկայացել մրցույթի կամ աճուրդի:

Հաշվի առնելով նման գույքերի հետագա օգտագործման անհնարինությունը, առաջարկվում է նմանատիպ դեպքերում համայնքային սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի ձևով տրամադրել անմիջապես կից գտնվող տարածքների վարձակալներին՝ ապահովելով գույքի օգտագործման արդյունավետությունը և Երևան քաղաքի բյուջե մուտքերը:

Երևան քաղաքի ավագանու մի շարք որոշումներով արդեն իսկ հաստատվել են օգտագործման տրամադրման և օտարման համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ցանկեր: Երևանի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 694-Ն որոշման հավելվածի 46-րդ կետով 2023 թվականին օտարման և (կամ) օգտագործման տրամադրման համար առաջարկվող գույքի կազմում ներառվել են Երևան քաղաքի ավագանու որոշումներով հաստատված Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010-2023 թվականների ծրագրերում

ընդգրկված, սակայն դեռևս չօտարված Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը և հողամասերը: Միաժամանակ ցանկում չներառված հողամասերի ծածկագրերը հնարավորություն չեն տալիս անհրաժեշտության դեպքում այն օգտագործման տրամադրել կամ օտարել:

3.Կարգավորման նպատակը

Նախագծով Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 694-Ն որոշման հավելվածում կատարվող լրացումները նպատակ են հետապնդում հստակեցնել Երևանի քաղաքապետի և Երևան քաղաքի ավագանու լիազորությունը գույքն ուղղակի ձևով փաստացի օգտագործողներին վարձակալության տրամադրելու հարցում, ինչպես նաև ցանկը լրացվում է նոր ծածկագրերով

4. **Ակնկալվող արդյունքը**

Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 694-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու արդյունքում կհստակեցվեն Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, հնարավորություն կընձեռնվի համայնքային սեփականություն հանդիսացող գույքի փաստացի տնօրինողի և օգտագործողի նկատմամբ ձևակերպել վերջինիս վարձակալության իրավունքը, հավելվածը կավելացվի նոր ծածկագրերով, որի արդյունքում կավելանա Երևան համայնքի բյուջեի մուտքերը:

Որոշման ընդունումը նպատակաուղղված է համայնքային գույքի հետագա օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

5. Նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 694-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 694-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 694-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 694-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում էական փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ